ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 22.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/06

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/454-18 գրությամբ «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 11.01.2018թ. թիվ 40-038 գրության հիման վրա, 16.01.2018թ. թիվ 03/26-3/454-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Նիկο-Տեկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Նիկο-Տեկ» ՍՊԸ-ն 25.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Նիկο-Տեկ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ. մայիսի 17-ին կնքվել է սողնակների, կափյուրների, փականների պահեստամասերի մատակարարման գնման N 02/067 պայմանագիրը: Պայմանագիրը կնքվել է մարտի 29-ին կայացած «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/17» բաց ընթացակարգով կայացած մրցույթի հանձնաժողովի կայացրած որոշման հիման վրա:

Ընկերությունը հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու համար Ընկերությունը նամակով դիմել է ՌԴ միակ արտադրող գործարանին՝ Չեխով քաղաքում գտնվող «ԷՆԵՐԳՈՄԱՇ-ՉԶԷՄ» ՓԲԸ-ին կոմերցիոն առաջարկ ստանալու նպատակով: Մինչև մրցույթի անցկացման վերջնաժամկետը՝ գործարանից ստացված պատասխանի հիմքով Ընկերությունը ներկայացրել է հայտ, որից հետո մրցույթը կայացել է, մասնակցել են երկու ընկերություն՝ «Նիկο-Տեկ» ՍՊԸ-ն և «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը նշել է, որ երբ արդեն հրապարակված էր պայմանագիր կնքելու որոշումը Ընկերությունը դիմել է վերոնշյալ գործարանին ապրքնեների ձեռքբերման պայմանգիր կնքելու առաջարկով: Գործարանը ուղարկել է պայմանագրի նախագիծը ապրիլի 18-ին, որն էլ Ընկերության կողմից կնքվել և էլեկտրոնային փոստով ուղարկվել է գործարանին: Սակայն հունիսի 5-ին Ընկերությունը ստացել է նամակ, համաձայն որի անկախ նախանական պայմանավորվածությունից, գործարանը հրաժարվել է ապրանքները մատակարարելուց, պատճառաբանելով, որ մատակարարումը կարող է իրականացնել միայն Հայաստանում գրանցված «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ի միջոցով, քանի որ վերջինս է հանդիսանում միակ մատակարար-ներկայացուցիչ դիլերը:

Ընկերությունը հայտնել է, որ «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ի հետ համաձայնություն չստացվեց ձեռքբերել և Ընկերության կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը դարձավ ռիսկային կամ նույնիսկ անհնար՝ ապրանքների ձեռբերման պայմանների չպլանավորված փոփոխությունների պատճառով:

Ընկերությունը հայտնել է, որ առկա էր գործարքի իրականացմանը խոչընդոտող մի քանի հանգամանքներ, այն է՝

Միակ արտադրող Չեխովի գործարանի պաշտոնական էջից Ընկերությունը տեղեկացվել է, որ ՀՀ-ում պաշտոնական ներկայացուցիչ է հանդիսանում «Էներգոպրոմթրեյդ» ՍՊԸ-ն, իսկ «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ն որպես «Էներգոմաշ-ՋՋԷՄ» ՓԲԸ-ի ներկայացուցչի մասին պաշտանական տեղեկատվություն Ընկերությանը չհաջողվեց ստանալ այլ աղբյուրներից: Չհաջողվեց ստանալ նամակ նաև էլեկտրոնային փոստի հասցեի և ընկերության ամբողջական վավերապայմանների վերաբերյալ, չնայած՝ ընկերության տնօրենի հետ բանավոր (հեռախոսային) պայմանավորվածությունից հետո:

Առկա չէ նաև «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ի պաշտոնական ինտերնետային էջը:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով վերոգրյալը, Ընկերությունը «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ի հետ համագործակցությունը համարում է անիրատեսական և խիստ ռիսկային, ուստի զուգահեռաբար անիրատեսական և խիստ ռիսկային է գնահատվում նաև այդ համագործակցության հիմքով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի հետ ունեցած պայմանագրային պարտավորությունների պատշաճ կամ ընդհանրապես կատարումը:

Ընկերությունը նշել է, որ նման իրավիճակում հաշվի առնելով նաև ապրանքների մատակարարման ժամկետային և որակական պայմանների լրջությունը, Ընկերությունից անկախ ստեղծվել է մատակարարման համար անիրականանալի և անհաղթահարելի իրավիճակ, որի պատճառով, հաշվի առնելով պայամանագրի թիվ 8 կետը, Ընկերությունը իրավիճակը գնահատել է անհաղթահարելի ուժի ազդեցություն և խնդրել է Պատվիրատուին երկկողմանի լուծել «Նիկo-Տեկ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ/ մայիսի 17-ին կնքված սողնակների, վենտիլների պահեստամասերի մատակարարման գնման N 02/067» պայմանագիրը, սակայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը լուծվում է միակողմանի:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է Խորհրդին Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Նիկo-Տեկ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.01.2018թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 11.01.2018թ. թիվ 40-038 գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից սողնակների, կափույրների, փականների, վենտիլների պահեստամասերի ձեռքբերման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի միջև «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 16.05.2017թ. կնքված թիվ 02/067 պայմանագիրը լուծվել է միակողմանի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից՝ «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի կողմից վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու պատճառով:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.01.2018թ. ժամը 11:20-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/06 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/06 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի միջև «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 17.05.2017թ. կնքվել է սողնակների, կափույրների, փականների, վենտիլների պահեստամասերի մատակարարման գնման թիվ 02/067 պայմանագիրը:

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սողնակների, կափույրների, փականների, վենտիլների պահեստամասեր /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված թիվ 3):

3. Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները նախատեսվել է գնել 2017թ. առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներում:

4. Ընկերությունը 20.05.2017թ. թիվ 15/6-17 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ Ընկերության կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը դարձել է անհնար՝ ապրանքների ձեռքբերման պայմանների չպլանավորված փոփոխությունների պատճառով և խնդրել է Պատվիրատուին, քանի որ Ընկերությունից անկախ ստեղծվել է մատակարարման համար անիրականանալի և անհաղթահարելի իրավիճակ, հաշվի առնել պայամանագրի թիվ 8 կետը, իրավիճակը գնահատել անհաղթահարելի ուժի ազդեցություն և երկկողմանի լուծել «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ/ մայիսի 17-ին կնքված սողնակների, վենտիլների պահեստամասերի մատակարարման գնման N 02/067» պայմանագիրը:

5. Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 16.11.2017թ. Ընկերությանն ուղղված թիվ 40-3067 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 36-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև Ընկերության կողմից 20.05.2017թ. թիվ 15/6-17 գրությամբ նշված հիմնավորումը չի կարող համարվել անհաղթահարելի ուժի ազդեցություն և պատճառ հանդիսանալ պայմանագրի 8-րդ կետի հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի միջև 17.05.2017թ կնքված թիվ 02/067 պայմանագիրը երկկողմանի լուծելու համար:

Ամփոփելով վերը նշվածը, Պատվիրատուն խնդրել է Ընկերությանը, հաշվի առնելով պայմանագրով մատակարարման ենթակա ապրանքների կարևորությունը, եռօրյա ժամկետում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին տեղեկացնել Ընկերության հետագա քայլերի մասին:

6. Ընկերությունը ի պատասխան վերը նշված գրության՝ հայտնել է, որ Ընկերության կողմից հերթական անգամ կատարված փորձերը՝ միակ արտադրող գործարանին դիմելու, ապարդյուն են անցել, քանի որ գործարանը շարունակում է դրժել իր կողմից մինչև մրցույթին մասնակցելը Ընկերությանը տրված կոմերցիոն առաջարկի հավաստիացումը,

ուստի Ընկերությունը չունի մատակարարման հնարավորություն և կրկին առաջարկում է երկկողմանի լուծել Պայմանագիրը:

7. Պատվիրատուն 11.01.2018թ. թիվ 40-036 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ հիմք ընդունելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկո-Տեկ» ՍՊԸ-ի միջև «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 17.05.2017թ. կնքված թիվ 02/067 պայմանագրի 3.1.7 կետը և Հավելված 2-ը, ինչպես նաև 2017թ. դեկտեմբերի 15-ին «Նիկո-Տեկ» ՍՊԸ-ի գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/454-18 գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 11.01.2018թ. թիվ 40-038 գրությունը՝ կից փաստաթղթերով և «Նիկո-Տեկ» ՍՊԸ-ի 25.01.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ*** (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) ***կատարելը»:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի միջև «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 17.05.2017թ. կնքվել է սողնակների, կափույրների, փականների, վենտիլների պահեստամասերի մատակարարման գնման թիվ 02/067 պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սողնակների, կափույրների, փականների, վենտիլների պահեստամասեր /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված թիվ 3):

Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքները նախատեսվել է գնել 2017թ. առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակներում:

Ընկերությունը 20.05.2017թ. թիվ 15/6-17 գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ Ընկերության կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը դարձել է անհնար՝ ապրանքների ձեռքբերման պայմանների չպլանավորված փոփոխությունների պատճառով և խնդրել է Պատվիրատուին, քանի որ Ընկերությունից անկախ ստեղծվել է մատակարարման համար անիրականանալի և անհաղթահարելի իրավիճակ, հաշվի առնել պայամանագրի թիվ 8 կետը, իրավիճակը գնահատել անհաղթահարելի ուժի ազդեցություն և երկկողմանի լուծել «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ»

ՓԲԸ-ի միջև ս.թ/ մայիսի 17-ին կնքված սողնակների, վենտիլների պահեստամասերի մատակարարման գնման N 02/067» պայմանագիրը:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 16.11.2017թ. Ընկերությանն ուղղված թիվ 40-3067 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 36-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ինչպես նաև Ընկերության կողմից 20.05.2017թ. թիվ 15/6-17 գրությամբ նշված հիմնավորումը չի կարող համարվել անհաղթահարելի ուժի ազդեցություն և պատճառ հանդիսանալ պայմանագրի 8-րդ կետի հիման վրա «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի միջև 17.05.2017թ կնքված թիվ 02/067 պայմանագիրը երկկողմանի լուծելու համար:

Ամփոփելով վերը նշվածը, Պատվիրատուն խնդրել է Ընկերությանը, հաշվի առնելով պայմանագրով մատակարարման ենթակա ապրանքների կարևորությունը, եռօրյա ժամկետում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին տեղեկացնել Ընկերության հետագա քայլերի մասին:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ***Ընկերությունը 15.12.2017թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ Ընկերության կողմից հերթական անգամ կատարված փորձերը՝ միակ արտադրող գործարանին դիմելու, ապարդյուն են անցել, քանի որ գործարանը շարունակում է դրժել իր կողմից մինչև մրցույթին մասնակցելը Ընկերությանը տրված կոմերցիոն առաջարկի հավաստիացումը, ուստի Ընկերությունը չունի մատակարարման հնարավորություն*** և կրկին առաջարկում է երկկողմանի լուծել Պայմանագիրը:

Պատվիրատուն 11.01.2018թ. թիվ 40-036 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ հիմք ընդունելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի միջև «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-6/17» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 17.05.2017թ. կնքված թիվ 02/067 պայմանագրի 3.1.7 կետը և Հավելված 2-ը, ինչպես նաև 2017թ. դեկտեմբերի 15-ին «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը:

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդն արձանագրում է հետևյալը.

Պայմանագրի 8-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1.7 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1 ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որի չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրային պարտավորությունների չկատարումը չի կարող դիտարկվել որպես Պայմանագրի 8-րդ կետով սահմանված անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, քանի որ վերը նշված կետով հստակ սահմանվում են այդ դեպքերը:

Ուստի վերոգրյալով պայմանավորված, Խորհրդը գտնում է, որ «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Նիկօ-Տեկ» ՍՊԸ-ի միջև 17.05.2017թ. կնքված թիվ 02/067 պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Ընկերությունը չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սողնակների, կափույրների, փականների, վենտիլների պահեստամասերը ապրանքատեսակները, Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը***:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Նիկo-Տեկ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, ուստի Խորհուրդը գտնում է, որ թույլ տրված խախտումը դեռևս բավարար հիմք չէ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/454-18 գրությամբ «Նիկo-Տեկ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 08209436) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ